## ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐ

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԸ՝

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

# ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐ



**10-ՐԴ** ԴԱՍԱՐԱՆԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

ԱՌԱՐԿԱ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ,ՏԵՂԵԿԱՏԱՎԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐ



Մեր բանախոսներն են

Սվետլանա և Նարե

Մերի և Աննա

Լիլիթ և Վահան

Դավիթ և Սոֆի




# ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԸ՝

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԻ

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՄ ԲՆՈՐՐԱՆԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ



**Կոտայք**, *Խատազավառ, Խատայիզավառ, Խատայոցզավառ, Կըրխբուլաղ, Կողեք*

Կոտայք (գավառ) — պատմականՀայաստանի Այրարատ նահանգի գավառներից

Ենթադրվում է, որ Կոտայք անունը հնագույն ծագում ունի և կապված է նույնանուն ցեղանվան հետ:Նույնացվում է ուրարտական սեպագիր արձանագրությունների Էտունի երկրի անվան հետ: Ղևոնդ Ալիշանը հնարավոր է համարում, որ Պտղոմեոսի հիշատակած Կոտակենե գավառը նույն Կոտայքն է:



Եղվարդ, քաղաք

Հայաստանի Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 39 կմհարավ-արևմուտք, Արայիլեռան հարավային ստորոտին, Եղվարդի դաշտում, Արզնի-Շամիրամ ջրանցքի հատման տեղում:Գտնվում  է մայրաքաղաքից 12 կմ հեռավորության  վրա:



Արայի լեռան անունը գալիս է հայ դիցաբանական աստծո՝ Արա Գեղեցիկի անունից, քանի որ լեռան գագաթները հեռվից (օր.՝ Երևանից) նայելիս՝ նմանվում են պառկած մի մարդու՝ Արային, ով ըստ հայկական դիցաբանության իր ներքին դաշտում է ճակատամարտել Ասորեստանի սեր տենչացող թագուհու՝ Շամիրամի հետ։ Այստեղ է ընկել իր կնոջ՝ Նվարդին, հավատարիմ մնացած հայոց թագավորը, որի արնաշաղախ մարմինը Նինոս արքայի հեշտասեր այրու՝ Շամիրամի հրամանով, դրել են ժայռախորշում, որ արալեզները կենդանացնեն նրան[3][4]։ Արայի լեռան փեշին գտնվող Եղվարդ քաղաքի բնակիչներն Արայի քիթը ներկայացնող գագաթնաքարը անվանում են Աքլորաքար, քանի որ այն լեռան ամենաբարձր գագաթն է




# ԵՂՎԱՐԴԻ ՆՇԱՆԱՎՈՐՆԵՐԸ

**Մովսես Բ Եղիվարդեցի** (ծ.թ. անհայտ – 604), Ամենայն հայոց կաթողիկոս 574 թվականից։ Նրա օրոք գործածության մեջ է դրվել Հայոց տոմարը: 591 թվականին Բյուզանդիայի կայսր Մորիկը ժողով է գումարել Կ. Պոլսում, որը Հայոց կաթողիկոսից պահանջում է, որ Հայ եկեղեցին ընդունի քաղկեդոնականություն։ Հայ եկեղեցու բյուզանդականին միաբանվելու միջոցով գաղափարապես ամրապնդվելու էր կայսրության տիրապետությունը Հայաստանում։ Սակայն Մովսես Բ Եղիվարդեցին մերժում է այդ առաջարկը, ինչից հետո կայսրը Հայաստանի բյուզանդական մասում ստեղծում է հակաթոռ կաթողիկոսություն՝ կաթողիկոս կարգելով Հովհաննես Բագարանցուն (591–611), որի աթոռանիստն է դառնում Կոտայք գավառի Ավան գյուղաքաղաքը։

Կաթողիկոսական գահին Մովսես Բ Եղիվարդեցուն նախորդել է Հովհաննես Բ Գաբեղենցին, հաջորդել՝ Աբրահամ Ա Աղբաթանեցին




# ԵՂՎԱՐԴԻ ՆՇԱՆԱՎՈՐՆԵՐԸ

**Մաշտոց Ա Եղիվարդեցի**, Սևանցի (ավազանի անունը՝ Ստեփանոս, 833, գ. Սոթք (Սոթք գավառ) – 898, թաղվել է Գառնիի տաճարի մոտ գտնվող մատուռում), Ամենայն հայոց կաթողիկոս 897 թվականից, մանկավարժ, եկեղեցական գրող։ Հաջորդել է Գևորգ Բ Գառնեցուն, նախորդել՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցուն։ Ուսանել է Թեոդորոս կրոնավորի, այնուհետև՝ Գեղարքունիքի Մաքենյաց վանքում Ստեփանոս վարդապետի մոտ։ Քահանա է ձեռնադրվել և օծվել Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի կողմից։ Այնուհետև ապրել է անապատականի կյանքով Արտավազդիկում (Ծաղկաձորի մոտ), 860 թ-ից՝ Սևանի մենաստաններում։ Սյունյաց իշխան Գաբուռն Վասակի կնոջ՝ Մարիամ Բագրատունու միջոցներով Սևանա կղզում 870-ականների սկզբներին կառուցել է Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները, որտեղ հիմնադրել է միաբանություն և վարժարան։



# Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան,

(փետրվարի 23, 1841, Կոստանդնուպոլիս, Օսմանյան կայսրություն - նոյեմբերի 19, 1918, Կոստանդնուպոլիս, Օսմանյան կայսրություն), աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության հասարակական գործիչ:

Կ. Պոլսի հայոց պատրիարք



Գրիգոր Ա Մամիկոնյան (ծննդյան թ. անհայտ - 685), Հայոց իշխան 661-ից: Համազասպ Մամիկոնյանի եղբայրը: 654-ին տարվել է Դամասկոս, որպես պատանդ: Եղբոր մահից հետո (661) վերադարձել է Հայաստան: Գրիգոր Մամիկոնյանի օրոք Հայաստանը կիսանկախ էր՝ ձևականորեն ենթակա արաբական խալիֆայությանը: Իր նստավայր Արուճում կառուցել է տաճար և պալատ: Աղվանից իշխանի հետ միասին հոների թագավորի մոտ է ուղարկել Իսրայել եպիսկոպոսին, որպեսզի, նրանց քրիստոնյա դարձնելով, ձեռք բերի դաշնակից՝ խազարների դեմ, սակայն վերջնական հաջողության չի հասել: Սպանվել է խազարների դեմ պատերազմի ժամանակ:



# Աղիբեկենք -Աղիզբեկ Ա իշխան

Աղիզբեկյաններ, *Աղիբեկենք* (Աղիզբեկ Ա իշխանի անունով), իշխանական տոհմ ուշ միջնադարյան Հայաստանում: Աղիզբեկյանների տիրույթները տարածվում էին Արայի լեռան հարավարևմտյան մատույցներում, կենտրոնն էր Եղվարդը: XIV դարում վասալական կախման մեջ էին Զաքարյաններից: Աղիզբեկյանների մասին մեզ հասած առաջին գրավոր փաստաթուղթը Ներսես գրչի՝ Եղվարդում գրած մի հիշատակարանն է (1318), որի համաձայն, Աղիզբեկյանների նշանավոր ներկայացուցիչ Աղիզբեկ Ա-ն վերաշինել է թշնամիների ավերած Եղվարդը և իշխել այնտեղ՝ ծառայելով Շահնշահ Զաքարյանին: Աղիզբեկ Ա-ն Քասաղ գետից ջրանցք է բացել, կառուցել Եղվարդի Ս. Հակոբ եկեղեցին։ XIV դարում Աղիզբեկյանների տոհմի հայտնի գործիչներից էր Արարատյան թեմի արքեպիսկոպոս Մանվելը։

XIV-XV դարերում Եղվարդում Աղիզբեկյանների հովանավորությամբ ծաղկում է կրթական գործը։ 1394-1404 թվականներին հայ մանկավարժ Սիմեոն Այրիվանեցու ջանքերով կազմվել են արժեքավոր տեղեկություններ պարունակող ձեռագիր հիշատակարաններ։ XV դարի երկրորդ կեսից Աղիզբեկյանների հոգևոր և աշխարհիկ իշխանությունը կենտրոնացված էր Եղվարդի արքեպիսկոպոս Մանվել III-ի ձեռքում։ Աղիզբեկյանների 1491 թվականից 1667 թվականի գործունեության մասին հիշատակություն չկա։ 1667 թվականին Բջնիում Աղիզբեկյանները նորոգել են Աղիզբեկ Ա-ի և նրա տիկնոջ՝ Վախախի ավետարանը

# Դովրի համայնք



Դովրի— Վաղ բրոնզի դարի բնակության հետքեր, ուշ բրոնզի և վաղերկաթի դարերի ամրացված բնակավայր, ուրարտական ամրոց-քաղաք,Հելլենիստական բնակավայր, ուշ միջնադարյան գյուղատեղի։ Գտնվում էՋորավան գյուղից 1,5 կմ արևելք։ Դովրիի ամրոցը զբաղեցնում է մոտ 350 մ երկարությամբ պայտաձև բարձունք:Բլուրի հարավային, բարձրադիր հատվածում է կառուցված ուրարտական ամրոցը, որը զբաղեցնում է շուրջ 1 ՀԱ տարածություն։ Ամրոցի ներսումնկատվում են լավ մշակված, բազալտե քարերով կառուցված ուրարտականմոնումենտալ ճարտարապետական շինությունների հիմքեր։ Ուրարտական շինությունների հետքեր նկատվում են նաև բլուրի հյուսիսային և արևելյանչանչերին և ստորոտում։ Ուրարտական ժամանակաշրջանի վերգետնյա նյութը ներկայացված է ինչպես հասարակ, այնպես էլ շքեղ, կարմիր փայլեցված պալատական խեցեղենով

ԳՐԻԳՈՐ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՏԻՐԱՑՅԱՆ, ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ: 1975 թվական

# Դվինի համայնք





Դովրի համայնք





# Դովրի









# Դովրի










# Դովրի համայնք



քարերով ամրոցի պատեր կան, որոնք, կարող եմ ասել, թե որմնաշինական գործիքներ բնավ գործածված չեն շինության ժամանակ, պատի հսկայական քարերի վրա ոչ միայն որմնաշինական գործիքների հետքեր չկան, այլև կազմված պատի քարերը շարք չունեին. միմյանց վրա անավոր քարերի կուտակումներ են, լարաձիգ ուղղության հետք չկա, աչքի չափով, տեղին վրա հարմարցնելով շինված պատեր են: Կրաշաղախը բնականաբար անծանոթ էր, իսկ մեծադանգված չոր քարերի կուտակումով կազմված պատերն ավելի ճիշտ կլիներ, փոխանակ պատի կամ պարսպի, արգելափակ անվանել: Այս որմնաշինության այս ձևն է, որ ես վերագրում եմ առաջին շրջանին:

Կան նաև պատեր և պարիսպներ, որոնք թեև մեծադանգված քարերով անշաղախ շինված են, սակայն փոքր ի շատե հառաջադիմություն են ցույց տալիս որմնաշինության մեջ: Հիրավի, դարձյալ քարերի կարգ չկա, այնուամենայնիվ նախընթաց շրջանի նման կուտակումներ չեն, անկանոն ձևով քարերի իրարու վրա զետեղումն առաջ եկած դատարկությունները, ըստ հնարավորության, փոքր քարերով լցված են: Մեծամեծ քարերի պատահական անկանոն բարակ պոչերը կտրելով, անշարժ զետեղման հարմարեցրած են տեղի վրա: Սա արդեն երկրորդ շրջանն է:

Դալիս է մի ուրիշ շրջան, որի ժամանակ ոչ միայն պատի քարերը համեմատաբար փոքրանում են, այլև հատ-հատ քարերի վրա երևում են քառակուսելու և լարաձիգ ուղղությամբ պատի մեջ շարելու ճիգերը: Նույնիսկ նկատվում են քարեր, որոնք ամբողջովին տաշված են: Այս տաշված քարերը գործածված են անկյունների և դռների բարավորների համար: Ավելի կանոնավոր տաշված են ուրարտական շրջանի բևեռագիր քանդակված քարերի երեսները: Եղվարդի մոտ, Դովրի գյուղի մեջ, նախաքրիստոնեական հին ամրոցի քարերի մեջ համեմատաբար ավելի շատ են սրբատաշ որձաքարեր:

Իմ կարծիքով, քարերի այսքան մաքուր տաշվածք կարելի էր միայն երկաթի գործիքներով ստանալ: Ուստի, բնականորեն կարելի է հետևցնել, որ տաշված որձաքար երեսներով կառուցված շենքերը երկաթի դարու և երկաթե գործիքների արտադրած գործեր են: Իմ երկար հետախուզական հնագիտական ընթացքում երկու տեղ միայն տեսած եմ մաքուր տաշված բազալտ քարեր: Այդօրինակ քարեր նախ երևում են Արմավիրի շրջանում, որ, ըստ ամենայնի մաքուր տաշելուց հետո, շատերի վրա բևեռագիր արձանագրություններ փորագրված են: Երկրորդ՝ Դովրիում, այս գյուղում բևեռագիր արձանագրություններ չեն երևում (գուցե եղել են և ժամանակի ընթացքում անհետացել են), բայց կառուցված փոքր միջնաբերդի կամ դղյակի պատերի մեծ մասը տաշված բազալտ քարից են: Այս երևույթն ինձ ենթադրել է տալիս, որ Դովրիի ամրոցը շատ ուշ ժամանակ շինված է (անշուշտ ուրարտացիների օրով): Այնպես որ, այն ժամանակ, երբ որ երկաթի գործիքները բավականին կանոնավորված էին և գործածությունն ընդհանուր եղած էր:

Ինչպես վերև ակնարկեցի, արդի Հայաստանի մի փոքր սահմանի մեջ այնքա՛ն խիտ կերպով տարածված կիկլոպյան ամրոցներ և ամրոցների հովանավորության տակ քաղաքատեղիներ ցույց են տալիս, թե այդ փոքր մասի մեջ քանի՞ համայնքներ կային և ինչ քաղաքական ու տնտեսական հարաբերության մեջ էին միմյանց հետ:

Նախնական բերդեր և բերդաքաղաքներ գտնված շրջաններում, հետագային, մինչև մեր օրերը կյանքը շարունակող բնակիչներ հետզհետե մաշեցուցել են այդ բերդերն ու ամրոցները, և հազիվ մնացել են հաճախ շրջապարիսպների հիմքերը. պատերը հետզհետե քանդել են և քարերն իրենց անձնական պետքերի համար են գործածել: Նույն վարմունքն ունեցել են նաև քաղաքատեղիների հետ, մեծ մասամբ բնակարանների քարերը մաքրելով, վարելահող են դարձրել: Իսկ կան այնպիսի վայրեր, որոնք ոչ միայն որոշ չափով պահել են ամրոցներն իրենց պարիսպներով և պարսպապարփակ շենքերի ավերակներով, այլև մի քանի շարք պարիսպներով շրջապատված բարձր բլուրների ստորոտում՝ քաղաքատեղիներ բարձր ամրոցի հովանուներքև: Այս մնացորդ քաղաքատեղիների մեջ պարզ կերպով կարելի է որոշել բնակարանները, քաղաքի փողոցները և ուրիշ կուլտուրական մնացորդներ: Ահա այս բազմադարյան ավերակներն են, որ կարելի է որոշ չափով նկարագրել և ճարտարապետական ու շինարարական տեսակետով կարծիքներ հայտնել, որոնք պիտի պարզեն նաև շինության ժամանակը կամ դարաշրջանները:

Նախնադարյան շրջանի սկզբից մինչև քրիստոնեական թվականի նախօրյակը Հայաստանում գոյություն ունեցող ամրոցների և քաղաքատեղերի անունները հետևյալներն են, որոնց ես տնձնապես այցելել և ուսումնասիրել եմ.

1. Արմավիր
2. Հաջի-Թալիլ
3. Հառոմ
4. Աղյաման
5. Կափըլի
6. Ամբերդ
7. Ջեյվա
8. Կուլիջան
9. Կանլիջա
10. Շիրվանջուղ
11. Օշական
12. Մահմուդջուղ
13. Թալին
14. Արմալու
15. Կոխդայիրման
16. Գյավուրղալա
17. Աղջակալա
18. Ղրղնավուզ
19. Աղամնատուն
20. Այթամուր
21. Դովրի
22. Հաջիդարա
23. Հարամլու
24. Ֆրանգանոց
25. Ղոթուր (յայլա)
26. Շամիրան
27. Կարսի շրջան

Այս ցուցակի մեջ սահմանափակ թվով գրված են կրոմլեխներ և մենհիրներ պարունակող տեղերի անունները:

Վերոգրյալ ցանկը միմիայն պատմական Այրարատյան նահանգի մեջ գտնվածների ցուցակն է, այն էլ ոչ լրիվ: Բավական թիվ կկազմեն նախնադարյան այն ավերակները, որոնք ես չեմ տեսած և չեմ կարող անոնց մասին որևէ կարծիք հայտնել: Իսկ եթե ամբողջ Հայաստանը խուզարկենք, գուցե իմ տված ցուցակի տասնապատիկեն ավելի ավերակներ գտնենք, քան ինչ որ ես տեսել եմ:

Իմ վերոգրյալ ցուցակի մեջ գրված տեղերում





# Զորավոր եկեղեցի կամ Սբ. Թեոդորոս կամ Ղարղավանք







# Զորավոր եկեղեցի կամ Սբ. Թեոդորոս կամ Ղարղավանք



Եկեղեցու «Զորավար» անունը կապված է սպարապետ Գրիգոր Ա Մամիկոնյանի անվան հետ: Որոշ մատենագրական աղբյուրներում այն անվանված է Սուրբ Թեոդորոսի վանք: Գ. Հովսեփյանը, վկայակոչելով Մատոց կաթողիկոսի կենսագրությունը, գտնում է, որ եկեղեցու անվանումը գալիս է Թեոդորոս Ստրատիլատի անունից, որին այն նվիրված է

# Զորավոր եկեղեցի կամ Սբ. Թեոդորոս կամ Ղարղավանք











Կենտրոնագմբեթ բազմախորան կառույց է, որը ներկայումս գտնվում է ավերակ վիճակում։ Եկեղեցու արևմտյան մասին կից է ուղղանկյունաձև դահլիճի տեսքով գավիթ, որի անկյուններից մեկում գտնվում է ավանդատունը։ Պահպանվել է նաև 12-13-րդ դարերի մատուռը, որը կառուցվել է հին մատուռի տեղը։ Վանքը եղել է գրչության կենտրոն[5]։ Համալիրի հյուսիսային կողմում պահպանվել են վանական կառույցների ավերակները



Եկեղեցին արտաքուստ բաժանված է երկու մասի՝ վարի տասնութ նիստ ունեցող ծավալը և նրա վրա բարձրացող գմբեթը։ Եկեղեցու պատերը շարված են կարմրավուն տուֆի խոշոր քարերով, ներպատային տարածությունը լցված է խճաբետոնով, որի լայնությունը նվազագույն է և այդ պատճառով էլ պատը համաձույլ տեսք ունի։ Կառույցի կոնստրուկտիվ կարևոր մասերը, ինչպես թմբուկը պահող կամարները և քիվն իրականացված են ավելի մեծ չափի քարերով (60 սմ x 70 սմ)։ Եկեղեցու մակերեսը 95 մ$^2$ է։ Ենթագմբեթային շրջանաձև տարածությունը բոլոր կողմերից երիզում են հատակագծում պայտաձև ութ խորաններ, որոնց առանցքները ուղղված են դեպի եկեղեցու կենտրոն։ Արևելյան խորանը զգալիորեն մեծացված է և ընդգծված է բեմաձև ելուստով, իսկ արևմտյանն ունի փոքր-ինչ ավելի մեծ չափեր։



Խորաններն ավարտվում են գմբեթարդներով, որոնց վրա կախվում են կիսաբոլորաձև կամարները: Խորանների միջև պատերի եզրերը ձևաորված են երեք քառորդ սյուններով, որոնք ունեն պարզ խարիսխներ և խոյակներ: Արևելյան և արևմտյան խորանների մեծ չափերով պայմանավորված կամարների գագաթները չեն գտնվում նույն շրջագծի րա ինչ մյուս խորանների կամարների գագաթները: Առաջացել է թմբուկի տրամագծի տարբերություն, որը իրականացրել է համապատասխան կամարների գագաթները մոտեցնելով շրջագծին: Թմբուկը կրող երկրորդ շարքի կամարներն ունեն ոչ թե ուղղաձիգ հարթություն, այլ կոնաձև: Ավագ խորանը պսակող կամարը հատվում է թմբուկի քիվի հետ: Այդ քիվը հիմք է հանդիսանում գմբեթի համար[6







Թմբուկը, որ ներսից գլանաձև է, իսկ դրսից 12 նիստ ունի, ավարտվում է, կիսաձվաձև գմբեթով։ Սաղավարտաձև ծածկը, հիմնականում պայմանավորված լինելով գմբեթի ձևով, ինչպես նաև նրա գագաթների և թմբուկի արտաքին քիվի նախագծային նիշերի հարաբերակցությամբ, համանման է Մրենի տաճարի և Կարմրավորի եկեղեցիներին[7]։ Գմբեթի տանիքի, ինչպես նաև ստորին ծածկի նիստերի թիվը Համապատասխանում է բազմանկյունների ուղղահայաց նիստերին, որոնք ներքևում 18->ն են, իսկ վերևում՝ 12-ը։ Ծածկը կղմինդրից է։ Թմբուկի նիստերի վրա կան ծածկի հետքեր, որոնց վերին նիշը լուսամուտները ծածկել է 30-40 սմ չափով։ Նման բարձր տանիքը բնորոշ է 7-րդ դարի մի շարք հուշարձաններին (Թալինի տաճար, Հոիփսիմե, Արուճ, Լմբատավանք), որոնց վերականգնման ժամանակ կղմինդրե ծածկը փոխարինվել է քարե սալերով։

1327 թվականին վանքը վերականգնվել է



Որմնախարսխի վրա կանգնեցված և սրբատաշ քարով կառուցված եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ հյուսիսային և արևմտյան: Վերջինս այն կապել է գավթի հետ: Պահպանված հյուսիսային մուտքը ձևավորված է եղել կիսասյուներով, մուտքի տիմպանը բոլորող կամարով: Տիմպանի վրա եղել է խաչաքանդակ՝ շրջապատված զարդաքանդակներով:

Յուրաքանչյուր խորանում կան բարձր լուսամուտներ, որոնք դեպի ներս փոքր-ինչ լայնացել են: Թմբուկն ունեցեք է աշխարհի չորս կողմերն ուղղված պատուհաններ, որոնց ստորին մասը հորիզոնական է և թմբուկի քիվի վերնամասի հետ մի նիշի վրա է գտնվում: Գմբեթի պատուհանները զգալիորեն ավելի խոշոր են ստորին պատուհաններից:

Ամբողջ ստորին ծավալն ունի կոնաձև ավարտվող եռանկյունի խոր որմնախորշեր: Դրանք զարդարված են առանց խոյակների երեք քառորդ սյուներով, որոնց հիմք են ծառայում կիսաղորաձև եզրերով քարերը: Միայն գլխավոր (արևմտյան) մուտքը եզերող որմնախորշերում մուտքի նշանակությունը շեշտելու համար սյուներն օժտված են դարդաձևերով:





Ավելի վեր՝ քիվի նեղ ելուստի վրա, քանդակված է պլիքաձև ցողուն՝ խաղողի ողկույզներով և տերևներով: Թմբուկի նիստերի անկյունները ձևավորված են նրբագեղ կիսաբոլորաձև որմնասյուներով, որոնք ներդաշնակում են ստորին ծավալի սյուներին: Ինտերյերներում խորանների կամարների իմպոստները գոգավոր սեղանաձև հարթ քարեր են: Ներքին և արտաքին հարթությունների վրա պահպանվել են վարպետների շինարարական տարբերանշանները, որոնք նման են Իրինդ եկեղեցու համապատասխան նշաններին: Եկեղեցու ներսում եղել են որմնանկարներ:

# Զորավոր եկեղեցի կամ Սբ. Թեոդորոս կամ Ղարղավանք





ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ  ԹԻՎ 1

# ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ   ԻՐԱԶԵԿՈՒՄ





# ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ  ԹԻՎ 1

## ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ   ԻՐԱԶԵԿՈՒՄ










ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 1

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՈՒՄ ՄԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՆԴԵՊ

ՆԵՐՔԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ





ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 2

# ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԹՂԹԵ,ԿՏՈՐԵ ՏՈՊՐՈԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՄԻ ՀԻՄՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ








## ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 2

# ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

# ԹՂԹԵ,ԿՏՈՐԵ ՏՈՊՐՈԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՀԻՄՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ





ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 2

# ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

ԹՂԹԵ,ԿՏՈՐԵ ՏՈՊՐՈԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՀԻՄՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ





ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԶՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 2

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՂԹԵ,ԿՏՈՐԵ ՏՈՊՐՈԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ







ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ  ԹԻՎ 3

# ԴՈՎՐԻ ԲԵՐԴ-ԱՄՐՈՑԻ 3D ՄԱԿԵՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ



## ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ ԹԻՎ 3

# Հայաստանի Պատմության թանգարանի հետ համագործակցություն





# ԱՅՍՊԻՍՈՎ

## ՄՇԱԿԵԼ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՄԻՏՎԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ





# ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԱՐԻ ԶՈՐԱՎԱՆ



